

ԽՐԱՏԱԿԱՆ, ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա .

Առիւծն յառիւծին մըսէն թէ հազար որ տան նէ չուտէ:
Գեմ ինքն ալ առիւծ եղեր, զառիւծին փասըն կու պահէ:
Ճառըն գընալ չըկարէ յայն տեղացն որ ինք բուսեր է.
Երբ կոթն ի ծառէն լինայ, նա կացին զինքըն կը կըտրէ:

Բ .

Կ'ասեմ թէ հայրեն ասա՛, թէ չէ ես ասեմ դուն լըսէ՛.
Չբերանդ ալ քենով ածէ՛ ու զականջդ ալ գուց դու պահէ՛.
Չետ օղ ի ականջըդ ա՛ռ, զետ կարմիր դեկան ծըրարէ՛.
Այն մարդն որ շատ կը զուրցէ, նա յետին խօսքըն կու լըսէ:

Գ .

Արծիւն ու շահէն բազան հետ վարօժ կաբուուն դատէին:
Տարին պարեխին ածին ու բոլորըն քար շարեցին:
Վարի վարճինակ մ'եկաւ, զորսն առաւ այն երկու քաջին:
Արծիւն ու շահէն բազան լուկ հայրան ի վայր մընացին:

Դ .

Եղնիկ մ'ի ջըրին խըմելն զեղջերաց ըզշուքն եր տեսեր.
Նա յԱնթաքիայ զարկեր թէ՛ Սըլեհ եմ հետ վերուցեր:
Օր մի յառիւծէն փախեր, նա եղջիւրն ի ծառն է գամեր.
Չով որ իր ճարակ դըրեր, նա իւր մահն ի յանկից եղեր:

Ե .

Աւա՛ղ ու հազար բերան, թ'ինչ խելօք 'ի անխելացայ.
Ասի թէ վաճառ անեմ, ի շահուն տեղըն զենեցայ.
Ասի թէ բարեւ մի տամ այն կըռոցն որ մարդ չիմանայ.
Նա զթագս ի գըլխոյս առին՝ հանց շուտով որ ես չիմացայ: